С 32-1
А 237

Ս. ՖԵԴՈՐՉԵՆԿՈ

# ՍՐԱ ՎԵՐՋԸ Ո՞Վ ԳՏՆԻ

ՓՈԽ. ԽՆԿՈ-ԱՊԵՐ



Библиотека Института Востоковедения Академии Наук СССР

ՊԵՏՀՐԱՏ 1931 ՅԵՐԵՎԱՆ

891.71Ն
Ֆ-32
05.09.2013
5671
30 MAY 2011

ՆԿ. Ֆ. ՊՈԼԻՑՉՈՒԿԻ



ՀԱՅ. ԱԳԵՏ. ԳՐ-ԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՀ-Арм ССР
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎ.
56069-66
БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР

1

Պուտիկ, պուտիկ,
պուտպուտիկ,
շղարշ թևեր
խատուտիկ,
շողերի տակ
վառվռուն,
Թը՛ռ—թը՛ռ թիթեռ
Թռվռուն.
Թը՛ռ—թը՛ռ, թիթեռ
տիկ, տիկ, տիկ,
վորտեղ ծաղիկ՝
դու տիտիկ,







ծաղիկներից
հյութ ծծան,
տերևներում
ձու ածան։

2

Թիթեռնիկը
ձու ածեց,
տերևի տակ
ձուն պահեց,
ցողուն, տերև
հովանի,
որ թշնամին
չտանի։

ՊԵՏ ԿԱՆ ԳՐ. ՊԱԼԱՏ
Гос Библиотека
ՀՍՍՌ-Арм. ССР



3

Անցավ աշուն,
ցուրտ ձմեռ,
յեկավ գարուն
կենսաբեր.
ելի տերև,
ծիլ, ծաղիկ,
ելի ցողուն
շող — շաղիկ։
Ձվում բացվեց
ներսից դուռ,
յեվ լույս ընկավ
մի թրթուռ









Թավիկ, Թավիկ,
Թավամազ,
մեջքը գոլ—գոլ
խաղեխազ։
Փոքրիկ Թրթուռ
անկշտում

տերևներ է
խփշտում.
վորտեղ տերեվ՝
նա վրան,
մկրատի պես
սուր բերան,

ցերեկ, գիշեր
ծամ ու կեր,
ինչքան ասես
շատակեր,
փռվում, չռվում
կես արթուն,

իրեն թելով
փաթաթում,
քնում մո՜ւշ—մո՜ւշ
բոժոժում,
հարսնյակ դարձած
չի շարժվում։







Ցեվ բոժոժում
ընած դեռ
նա դառնում է
մի թիթեռ,
իսկույն անցնում
յեվ ուժի,
ծակում պատը
բոժոժի,
ու բոժոժից
լույս աշխարհ...
Չորս թեվանի,
նաշխ—նկար։





Պուտիկ—պուտիկ,
պուտուտիկ,
շղարշ թեվեր
խուտուտիկ,
Թը՛ռ —թը՛ռ թիթեռ,
տիկ, տիկ, տիկ,
վորտեղ ծաղիկ,
նա տիտիկ․
ծաղիկներից
հյութ ծծան,
տերեվներում
ձու ածան։





4

Թիթեռնիկը
ձու ածեց,
տերեվի տակ
ձուն պահեց,
ցողուն, տերեվ
հովանի,
վոր թշնամին
չտանի։
Անցավ աշուն,
ցուրտ ձմեռ,
յեկավ գարուն
կենսաբեր.



ելի տերեվ,
ծիլ, ծաղիկ,
ելի ցոլուն
շող—շաղիկ։
Ձվում բացվեց
ներսից դուռ,
յեվ լույս ընկավ
մի թրթուռ
թավիկ, թավիկ,
թավամազ,
մեջքը գոլ—գոլ
խազեխազ։
ծաղիկներից
հյութ ծծան,
տերեվներում
ձու ածան։

5

Թիթեռնիկը
ձու ածեց,
տերեվի տակ
ձուն պահեց,
ցողուն, տերեվ
հովանի,
վոր թշնամին
չտանի...
Քանի կրկնենք
չի հատնի՝
սրա վերջը
ով գտնի։

ՀՍՍՌ-Арм ССР
ՀՀ Ազգային գրադարան
NL0395420

ԳԻՆԸ 50 ԿՈՊ.

С. ФЕДОРЧЕНКО

# НАЙДИ КОНЕЦ
## *кто может*

ПЕР. ХНКО-АПЕР

ГИЗ. ССРА 1931 ЭРИВАНЬ

Библиотека
Института
Востоковедения
Академии Наук

891.71Ն
Ֆ-32

Պետհրատ № 1481 Գրատեսչվար № 6110 Տիրաժ՝ 4000
Վիմագրատուն Հայպոլիգրաֆի Պատվեր № 1098